№ 115 Երեքշաբթի Հոկտեմբերի 13 1887 Երեքշաբթի Հոկտեմբերի 13 № 115

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Երևանից· Նամակ Խարկովից· Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Առողջապահական միջազգային կոնգրէսը Վիէննայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 7-ին

Մինչև հայոց ծխական դպրոցների փակվելը Երևանում գոյութիւն ունէին երկու ընկերութիւններ, մէկը Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը և միւսը Երևանի Կանանց Բարեգործական ընկերութիւնը։ Արանցից առաջինը, ինչպէս յայտնի է և ընկերութեան կանոնադրութիւնից, թէև ոչ բոլորովին, բայց մասամբ նպաստում էր մեր չքաւոր դպրոցներին, օգնում էր չքաւոր աշակերտներին, վերջապէս այդ նպատակի համար յատկացնում էր մի որոշ գումար։ Իսկ երկրորդը իր այժերը ամբողջապէս նուիրում էր տեղիս Գայանեան օրիորդական դպրոցին։ Այդ իսկ ժամանակում նոյն դպրոցի համար ընտրված էին կանաչ հոտարարձուներ, այդ իսկ ընկերութեան անդամներից, այնպէս որ ընկերութիւնը սերտ կերպով կապված էր օրիորդական դպրոցի հետ։

Այդ օգնող ընկերութիւնների գոյութիւնը իսկոյն աչքի էր ընկնում. չքաւոր աշակերտները հագուստ և դասական առարկաներ ունէին, ձրիավարժների թիւը ուսումնարանում լրացած էր, նրանց փոխարէն վարձ տուող կար, և այլն։ Իսկ այժմ՝ երբ չը կան այդ երկու ընկերութիւնները, կը տեսնէք աշակերտների թւում բոլորովին ցընցոտիներով ուսումնարան գնացողներ, ամսով ուսումնարան չը գնացողներ, որոնք վարձը չեն կարողանում տալ և այլն։ Այժմ երբ դպրոցները բացված են, Երևանի այդ երկու ընկերութիւնները էլ դեռ քնած են և գուցէ երկար այդպէս մնան։ Այս հանգամանքում ինչ էլ որ լինի, այդ երկու ընկերութիւններն էլ եթէ չը շարունակեն իրանց գոյութիւնը, այնու ամենայնիւ հարկաւոր է մի այդպիսի նպաստող ոյժ, անհրաժեշտ է նրա գոյութիւնը։

Այդ երկու ընկերութիւններն էլ ունեն այժմ փող. կանանց ընկերութիւնը ունի մի քանի հարիւր բուբլի փող, որը գտնվում է տեղիս թեմական դպրոցի հոդաբարձութեան մօտ, որի տակոսը վճարվում է Գայանեան դպրոցին, հետևաբար լաւ հիմք է դարձեալ շարունակելու։ Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղը նոյնպէս ունի մի քանի հարիւր բուբլի փող, որը գտնվում է այս և այն անձանց մօտ և որի մասին, կարծեմ, Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի վարչութիւնը գրաղրութիւն սկսած է։

Մի դժուարութիւն էլ այժմ աւելացել է աղքատ դասակարգի համար՝ ծննդական վկայական առնելիս յօգուտ ուսումնարանի վճարվելի նուէրն է։ Տեղիս կօնսիստորիան չը նայելով թէ խնդրատուն աղքատ, որը էլ լինի, վերցնում է 5-ական բուբլի ամեն մի վկայականի համար։ Հաշուելով դրա հետ և միւս ծախսերը, միայն ծննդական վկայականը արժում է 7—8 բուբլի։ Երբ չքաւորը այսպիսով տանում է իր որդուն դպրոց, որտեղ ձրիավարժների այլ ևս տեղ չը կայ,—նա պէտք է գտնէ 10 բուբլի վճարի, մի այդքան էլ գրքերի և դասական առարկաների է ծախսում, և այսպիսով նա ընդամենը ծախսում է 27—28 բուբլի։ Բայց որտեղից տայ խեղճ մարդը, երբ նա շատ անգամ հաց չունէ ուտելու։ Ուստի շատ չքաւորներ իրանց որդիներին չեն կարողանում տալ ուսման։ Մենք դիտենք օրինակներ, որ նոյն իսկ միջակ կարողութեան տէր մարդիկ դժուարանում են այս ծախսերն անել և իրանց որդիքը զրկված են մնում ուսումից, նոյն իսկ տարրական կրթութիւնից։

Այս բոլորը աչքի առաջ ունենալով, ցանկալի էր, եթէ ոչ նոր ընկերութիւնների հիմնելը, գոնէ երկու տարի առաջ գոյութիւն ունեցող տեղիս երկու ընկերութիւնների՝ Կովկ. Հայոց Բար. ընկ. տեղիս ճիւղի և Կանանց Բարեգործական ընկերութեան իրանց գործունէութեան նորոգելը։

Սպասենք և տեսնենք, թէ երևանցին ինչքան կարդարացնի իր վրա ունեցած կարծիքը, թէ մեզ մօտ շռայլութեան համար փող միշտ կայ, իսկ բարեգործութիւնների համար,—երբէք։

Ս. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՕՎԻՑ

—

Հոկտեմբերի 4-ին

Կթնատնտեսական մասը Խարկովի արդիւնահանդէսում նպատակ ունի մի կողմից ցոյց տալ կթնատնտեսութեան արդի դրութիւնը Ռուսիայում, միւս կողմից սովորեցնել այցելողներին կատարելագործված կթնատնտեսութիւն վարելը։

Այս մասում այցելողը կը տեսնէ զանազան տեսակի պանիր և իւղ՝ պատրաստված Ռուսիայի զանազան նահանգներում։ Հանդէս բերված նմուշների թիւը՝ համեմատած գոյութիւն ունեցող գործարանների թւի հետ՝ շատ քիչ է։ Խարկովը կթնատնտեսութեամբ պարապվող նահանգներից հեռու է. Խարկովի շրջակայքը միայն նոր նոր սկսում են փորձել կատարելագործված կթնատնտեսութիւն։

Շվեյցարական պանիրների մէջ առաջին տեղն է բռնում կովկասցիներին լաւ ծանօթ բարձր կուչենբախի պանիրը, որը դժուար է զանազանել իսկական շվեյցարականից։ Նա ունի նոյնը անուշահամութիւն, կոլոր մեծ աչքեր, միջակ աղութիւն։ Կովկասից ուղարկած է շվեյցարական պանիր նոյպէս և շվեյցարացի նեղիկեր, որի պանրոցը մօտ է Կուչենբախի պանրոցին։ Նեղիկերի պանիրը դունատ է, մանր աչքերով և չունի Կուչենբախի պանրի քնքշութիւնը—թէև բաւական համեղ է։

Ռուս յայտնի պանրագործները, ինչպէս Մեչչերսկի, Բլանդով, Զըզրզկին, յաջող կերպով մրցում են միմեանց հետ։ Կուչուբէյի պանիրը, որ Մոսկվայում մի քանի տարի առաջ գովասանքի առարկայ էր, այս անգամ ունի պակասութիւններ, կորցրել է իր անուշահամութիւնը։

Չեստեր (անգլիական պանիր) պատրաստողների մէջ՝ ըստ Խարկովի հանդէսի՝ առաջին տեղը բռնում է Բլանդով, յետոյ Բազբշնոյ և ուրիշները։ Ռուսական չեստերը այժմ հասած է մեծ կատարելագործութեան և սասնում է անգլիական արդիւնահանդէսում առաջնակարգ նշաններ։

Միւս պանիրները—բակչէյն, տիլզիտեան, լիմբուրգեան, ֆրանսիական, կանաչ—նոյնպէս լաւ են պատրաստված և դնահատված են արժանապէս։

Կովկասեան տեղական պանիրներից ուղարկված են՝ չնորհիւ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան՝ օսի, թուշի, թել (կաժ), չիլ, մոթալ և օշնակի պանիրներ։ Օսի պանիրը պատրաստել է Աղաեվ, կամեցել է կատարելագործել իր պանիրը—աղաջուր քսելով պանրին և ոչ աղաջրի մէջ ընկղմելով, ինչպէս առհասարակ ընդունված է։ Մտադրութիւն կայ Աղաեվին քաջալերելու համար տալ նրան միջակագին մի նշան։

Կովկասեան տեղական պանիրները վերջին ժամանակները սկսում են ռուս հասարակութեան ուշքը գրաւել։ Կովկասեան լաւ պանիրը շատ հաւանելի է օտարներին։ Եթէ գտնվեն կովկասցիներ, որոնք ցանկանան էժան կերպով լաւ պանիրներ մատակարարել մեծ քաղաքների սպառողներին—կարելի կը լինի զարգացնել Կովկասի տեղական պանրագործութիւնը։

Արդիւնահանդէսում կան և Փոքր-Ասիայից բերված պանիրներ, որոնք մրցումից ազատ են, իբրև օտարերկրեայ արդիւնքներ։

Իւղը ըստ մեծի մասին կարագի տեսակներից է։ Մի քանի նմուշներ փչացած են ճանապարհին։ Բայց և այնպէս ընտիր տեսակի իւղի մէջ պակասութիւն չը կայ։ Ռուսիայի հարաւից բերված իւղերը ըստ մեծի մասին անբաւարար են իրանց յատկութեամբ։

Կթնատնտեսական մասը, ինչպէս վերև ասացի, և ուսուցանում է այցելողներին։ Վերջինների ներկայութեամբ կթից հանում են սերը, պատրաստում են իւղ. կթից պատրաստում են պանիրներ զանազան տեսակի—ըստ որում բացատրում են մանրամասն բոլոր գործողութիւնները։ Մի առանձին սեղանի վրա ցոյց են տալիս կթը հետազօտելու եղանակները։

Կթնատնտեսական մասի գլխաւոր կառավարիչը Վերէշչաղին է, կթի հետազօտութեան մասնագէտը Աւետ. Քալանթար, որը ներկայացրել էր հանդէս իր նոր կազմած գիրքը կթի հետազօտութեան մասին։ Բացատրողներ են կթնատնտեսական ուսումնարանի աշակերտները։

Սերազատիչ (սերը կթից զատող) մեքենան շատ հետաքրքրում է գիւղատնտեսներին։ Նոր կթած կաթը ածում են մեքենայի մէջ, և մի քանի բոպէից յետոյ—մի խողովակով հոսում է սերը, միւսով—անսեր կաթը։

Այցելողներին զարմանալի է թւում հանդէս բերված պանրի և իւղի էժանութիւնը։ Քաղաքի խանութներում պանիրը վաճառվում է 40—50 կոպէկով, մինչդեռ արդիւնահանդէսում նոյնատեսակ պանիրը գնահատում են 25—30 կոպէկ։ Հասարակութիւնը սկսում է հասկանալ, որ նա կարող է աւելի էժան ապրանք ունենալ—եթէ չը ցանկանայ միջնորդներին մեծ տոկոսներ տալու։

Կթնատնտեսութեան հանդէսը մեծ դարկ կը տայ հարաւում կատարելագործելու կովապահութիւնը և կթնատնտեսութիւնը։

Արդիւնահանդէսի առիթով Խարկովի գիւղատնտեսական ընկերութեան նիստերը կազմվում են ամեն երեկոյ։ Զեկուցումների նիւթն առնված է ընթացիկ գիւղատնտեսական կեանքից։ Համառօտ կերպով ծանօթացնեմ ընթերցողին մինչև այժմ տեղի ունեցած զեկուցումների բովանդակութեան հետ։

Պրոֆ. Լինդէման կարդաց իր հետազօտութիւնների մասին, որ նա արել է այս ամառը Բեսարաբիայում ծխախոտի վրա երեցած հիւանդութիւնները բացատրելու համար։ Լինդէման գտել է երեք հիւանդութիւն, որոնցից մէկը նա համարում է իբրև իր սեփական գիւտ և որը անուանել է «ծխախոտի բարակացաւ», միւսը «տրիպսային ցաւ» և երրորդը «մոզայիկային ցաւ»։ Առաջին և երկրորդ հիւանդութիւնների պատճառները նա համարում է մի տեսակ միջատներին, որոնց կարճ նկարագրութիւնը արաւ իր զեկուցման մէջ. իսկ երրորդ հիւանդութեան պատճառը նա համարում է հողի առանձնայատկութիւնը։ Պ. Լինդէմանի արած դիտողութիւնները դեռ կատարեալ չեն։ Նա աւաջարկեց ծխախոտի բարակացաւի դէմ միջոցներ, որոնց յաջող գործադրութիւնը ապագայում լուծելու խնդիր է։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍԸ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

—

Պրոֆէսսոր Բրուարդէլից յետոյ ամբիոն բարձրացաւ առողջապահութեան հայրը—պրոֆէսսոր Պէտէնկօֆէր Միւնխէնից, որին ժողովը անվերջանալի «բրաւօ» աղաղակներով ընդունեց։ Համարձակ կարելի է ասել, որ պրոֆէսսոր Պէտէնկօֆէր ամենաժողովրդական մարդն է Վիէննայում. նա ոչ միայն նշանաւոր է իր գիտական հետազօտութիւններով, այլ և գեղեցիկ հռետոր է։

«Առողջապահութիւնը—ասեց պրոֆէսսոր Պէտէնկօֆէր,—հին գիտութիւն է, թէպէտ նոր ըսկսեցին այդ գիտութիւնը ճանաչել։ Մարդիկ ամենահին ժամանակներից սկսած ուներ էին կառուցանում, շորեր էին կարում իրանց համար և դրանով ընդլայնմամբ կատարում էին առողջապահութեան կանոնները։ Անգլիացիք գործնական ժողովուրդ են, նրանցից շատ բան կարելի է սովորել։ Այն բոլորը, ինչ բանին որ անգլիացիք կօմֆօրտ են անուանում և որ բառական թարգմանութեամբ նշանակում է միխիթարութիւն, առողջապահական մեծ նշանակութիւն ունի և նմանութեան արժանի է, որովհետև «միխիթարանքը» ունենալ և ախորժելի է, և օգտակար։ Տասն և եօթերորդ դարում, երբ Լօնդօնի աղդաբնակութիւնը մէկ միլիօնից պակաս էր, մահուան դէպքերի միջին թիւը այնտեղ հազարի վրա 42 պրոցէնտ էր կազմում, այն ինչ այժմ, երբ Լօնդօնում չորս միլիոն հոգուց աւելի են բնակվում, մահացութիւնը միայն 21 պրոցէնտ է կազմում, այսինքն երկու անդամ պակաս։ Գործնական անգլիացիները իրանց հարստութեան նշանաւոր մասը դրած են գնում կենսական կօմֆօրտի վրա, հետևելով հետևեալ առածին՝ Cleanliness is next godliness (մաքրութիւնը աստուածպաշտութիւնից յետոյ առաջին տեղն է բռնում)։ Մահուան դէպքերի պակասումը Լօնդօնում վկայում է այն բանի մասին, որ Աստուած, յիրաւի, հարիւրապատիկ է վարձատրում առողջապահական աստուածպաշտութեան համար։ Շատերը կարծում են, որ առողջութիւնից կարելի է ձրի օգուտ քաղել, որպէս օդից, և եթէ մեզանից մէկը կը հիւանդանայ, չէ որ բժիշկ կայ դրա համար. վերջը հօ այնու ամենայնիւ պէտք է մեռնենք։ Շատերը չը գիտեն առողջութեան գինը։ Առողջ մարդը ոչ միայն իրան աւելի լաւ է զգում, բայց աւելի շատ կարող է աշխատել և փող վաստակել։ Առողջութիւնը դրամագլուխ է և այդ պատճառով առողջապահութիւնը ազգային անտեսութեան մի բաժին է կազմում, որպէս և հաստատվում է այդ Լօրէնց Շտէյնի դրուածքներում։ Որ առողջութիւնը, իսկապէս, դրամագլուխ է կազմում և որ առողջապահական պայմանների բարեկարգման վրա արժէ փող ծախսել, ցոյց են տալիս հիւանդութիւններից առաջացած վնասները։ Առողջութիւնը, որը մենք դրամագլուխ անուանեցինք, մենք մինչև անդամ կարող ենք, մի այլ սեփականութեան նման, ժառանգութիւն թողնել մեր սերունդներին։ Դժբաղդաբար, հիւանդութիւններն ևս ժառանգական են։ Մինչև անդամ պատերազմի ժամանակ, ուր մենք կարող ենք մարդկային որոշ նպատակներին հասնել կեանքի և առողջութեան զոհաբերութեան գնով, առողջութիւնը նշանաւոր դեր է խաղում։ Տխուր փորձը ցոյց է տալիս, որ պատերազմներում զինուորները հիւանդութիւնների զոհ են դառնում աւելի մեծ քանակութեամբ, քան թէ թշնամիների գնդակների։ Ղրիմի պատերազմի ժամանակ 309,000 ֆրանսիական զինուորներից համարեա ամբողջ երրորդ մասը մեռաւ, այսինքն 95,240։ Նրանցից միայն 20,000-ը վէրքերից մեռան, իսկ 75,240 զանազան հիւանդութիւններից մեռան։ Անգլիացիները նոյն դրութեան մէջ էին գտնվում։ Անգլիացի հիգիէնիստ Պարկէս, որը Ղրիմի պատերազմի ժամանակ զինուորական բժիշկ էր, և փորձով տեսել էր զինուորների մահացութիւնը, աշխատեց, որ հիմնվի զինուորական բժշկական ուսումնարան, ուր առողջապահութիւնը դասաւանդութեան գլխաւոր առարկան է և որը իւրաքանչիւր անգլիական զինուորական բժիշկ պէտք է անպատճառ սովորէ։ Շնորհիւ Ղրիմի պատերազմի տխուր հետևանքների, զինուորական առողջապահութիւնը հերթական հարց դարձաւ ոչ միայն Անգլիայում, այլ և Ֆրանսիայում, Ռուսաստանում, Իտալիայում և բոլոր ուրիշ քաղա-

Լինդէմանի միւս զեկուցման նիւթը ֆիլօքսէրայի մասին էր։ Լինդէման զէմ է ֆիլօքսէրայի դէմ հաստատված յանձնախմբին. նա չէ հաւատում թէ ֆիլօքսէրայի հետ կարելի է մարտնչել։ Լինդէման կծու խօսքերով յանդիմանում է ֆիլօքսէրային յանձնախմբին և համարում է չարիք ոչ այնքան ֆիլօքսէրան, որչափ յանձնախումբը։ Վերջինս ոչնչացնելը՝ չնչտեց Լինդէման՝ կը կազմի գինեգործութեան զարգացման պատմութեան մէջ ոսկեայ մի էջ։ Շատ անձինք մտադիր էին վիճելու Լինդէմանի հետ, բայց նախագահը յայտնեց, որ այդ խնդրի առիթով նկատողութիւններ չեն ընդունվելու ժամանակի սղութեան պատճառով։

Ն. Զերվինսկի կարդաց տաւարի տեսակի ընտրութեան մասին և եկաւ այն եզրակացութեան, որ արդի գիւղատնտեսական դրութիւնը պահանջում է հարիւրից 99 դէպքում պահելու տեղական հասարակ տաւար (կով)։ Զերվինսկու զեկուցումը հակաճառութիւններ ծնեց։ Զեկուցման ընթացքում հանդիսաւոր կէտերը մնացին այնու ամենայնիւ հասարեա անխախտ։

Ն. Վերեշչագին ծանօթացրեց հասարակութեանը կաթնատնտեսութեան այժմեան դրութեան հետ հիւսիսում, յորդորեց հարաւացիներին լուրջ կերպով վերաբերվելու դէպի տաւարապահութիւնը և կաթնատնտեսութիւնը։

Աղ. Քալանթար խօսեց կաթնային ոչխարապահութեան վրա. թուեց կաթնատու ոչխարի տեսակները թէ հարաւային Ռուսիայում և թէ Կովկասում, նրանց տուած արդիւնքները։ Նկարագրեց զանազան պանիրների պատրաստելու եղանակները և առաջարկեց հիմք դնելու ոչխարի կաթից ընտիր տեսակի պանիր պատրաստելու—փորձնական հօտ կազմելով և ճիշդ դիտողութիւններ անելով։

Աւետ. Քալանթար հաղորդեց կաթի ստուգութեան մասին. պատմեց արտաահմանեան փորձերի և նկատողութիւնների մասին և բացատրեց կաթի յատկութիւնը ստուգելու նշանակութիւնը։ Զեկուցման վերջում ցանկութիւն յայտնեց, որ կաթի գնահատողները աչքի առաջ ունենան իւղի քանակութիւնը և ոչ միայն կաթի, ինչպէս մինչև այժմ ընդունված էր շատ տեղ։

Ա. Ֆօրատնատով քննեց գիւղատնտեսական վիճակագրութիւն կազմողների գործադրած եղանակները. յորդորեց գիւղատնտեսներին օգնութիւն տալու վիճակագրութիւն կազմողներին, հաղորդելով ճիշդ տեղեկութիւններ իրանց տնտեսութեան մասին։

Պ. Կասպէրով կարդաց միջազգային հացի վաճառողների մասին։ Տեղեկութիւնները ժողովել է Կասպէրով անձամբ արտաահման եղած ժամանակ։ Կասպէրով ցոյց է տալիս, որ ռուսաց հացի առևտուրը ունի շատ անկատարելութիւններ,— միջնորդները շատ են, հացի որակութիւնը լաւ չէ պահպանվում, դեսպանները չեն հետաքրքրվում հացի առևտրով և չեն օգնում նրա կանոնաւորութեան մասին։ Վերջում զեկուցանողը շեշտեց, որ առևտուրը պէտք է յարմարվի ազգային առանձնայատկութիւններին և օրնի մեծամասնութեան արդիւնաբերութեան։

Պ.պ. Դիտլով և Բոգդանով միասին ներկայացրին ընկերութեան դատաստանին մի վէճ, որ ներանք ունեցել էին մի քանի ամիս առաջ գրական ասպարիզում։ Դիտլով առաջարկում է հարաւի գիւղատնտեսներին լայնացնելու աշնանացան ցորենի մշակութիւնը. Բոգդանով համարում է զարնանացանը աւելի շահաւէտ։ Յաղթութեան մրցանակը տարաւ Դիտլով։

Պրոֆ. Դօկուչաեվ զեկուցեց երկու երեկոյ հողի գնահատութեան խնդրով. նոր բան չասեց, բայց հետաքրքրեց խնդրի հետ անծանօթներին։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, հոկտեմբերի 11-ին, Թիֆլիսի քաղաքային իգական արհեստագործական ուսումնարանում կայացաւ աղջկանց կիրակեայ դպրոցի բացումը ոչ հանդիսաւոր կերպով, որովհետև ուսուցչուհիները զբաղվեցան կիրակայ դպրոցի աշակերտների զիտութեան և հակացողութեան չափը քննելով և զանազան տեղեկութիւններ հաւաքելով։ Կիրակեայ դպրոցի հանդիսաւոր բացումը կը կայանայ հետևեալ կիրակի, հոկտեմբերի 18-ին։ Աւելորդ չէր լինի և մի քանի տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներին այդ օրը հաւաքված լսող կանանց մասին։ Կիրակեայ դպրոցի ունկնդիրներ լինելու պատրաստակամութիւն են յայտնել 47 կանայք և օրիորդներ լոլոր երկու բաժանմունքներում. դրանցից ռուսաց բաժանմունքում գտնվում են 20 հոգի, որոնցից 8 ռուսներ են, 1 հրէուհի և 11 վրացուհի։ Հայոց բաժանմունքում գտնվում են 12 հոգի, որոնցից 3 հոգի ռուսներ են, 8 հայուհի և 1 վրացուհի։ Վրաց բաժանմունքում գտնվում են 15 հոգի, որոնցից 10 հոգի ռուսներ են և 5 վրացուհիք։ Կիրակեայ դպրոցի աշակերտուհիների տարիքն է 13 տարեկանից սկսած մինչև 40 տարեկան։ Անդրադէտ են ռուսաց բաժանմունքում 1 հոգի, հայոց բաժանմունքում 4, իսկ վրաց բաժանմունքում—12։ Կիրակեայ դպրոցի զեկավարն է իշխանուհի Մ. Արղութինսկի։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ այն օրը, սեպտեմբերի 25-ին, երբ արդարադատութեան մինիստրը, պ. Մանասէին Երևան եկաւ, դատաստանական բէվիզիա անելու,—մինիստրի համար Սարդարի այգու դահլիճում պատրաստած էր մրգահանդէս։ Այդտեղ հանդէս էին գրված Երևանի ամեն տեսակ մրգեղէն բերքերը։ Ինչպէս յայտնի է մինիստրը Երևանում մնաց միայն մի օր, և այդտեղից ուղևորվեց Բագու։

—

Սեպտեմբերի 25-ին գիշերը, ինչպէս մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, այդ քաղաքի հասարակաց տներից մէնում սպանեցին մի Թուրքին։ Քննութիւնը սկսված է։

—

ԲԱՆԱՆՑ գիւղից մեզ գրում են հետևեալը։ «Տեղս այգեքաղը արդէն իր վարձանին է հասնում. դրա արդիւնքն էլ այս տարի շատ անչչան է։ Մասամբ կարկուտն է վնաս տուել խաղողին։ Արդէն երկրորդ տարին է որ Բանանցի այգիները վնասվում են կարկտից։ Իսկ յայտնի է որ կարկտաթակ խաղողից անկարելի է լաւ գինի պատրաստել, և այդ պատճառով այս տարի այգիներից ստացած բերքը միայն կիսադնով կարելի կը լինի ծախել։»

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Մուրիէի խմբագրութեամբ ԹԻՖԼԻՍՈՒՄ հրատարակվող ֆրանսերէն—ռուսերէն լեզուներով ապող «Revue Commerciale et industrielle du Caucase» վերնագրով կիսամսեայ հանդիսի առաջին համարը։ Պ. Մուրիէ իր առաջաբանի մէջ բերելով մի քանի կտորներ Տիսանդիէի «La Nature» հանդէսից, որից երևում է որքան թերի հասկացողութիւն ունեն օտարները մեր երկրի մասին, ասում է որ իր հրատարակած հանդիսի նպատակը հէնց այն է, որ քաղաքակիրթ աշխարհը կարողանայ ծանօթանալ մեր երկրի հետ, որ դեռ ևս անծանօթ է իրան, այն ինչ մեր երկիրը մեծ և փայլուն ապագայ ունի։ Հրատարակված գրքոյկը մեծ մասամբ յայտարարութիւններով է լցված, իսկ յօդուածները բռնում են միմիայն 14 երես։ Յօդուածները, բացի առաջաբանից, հետևեալներն են, որոնցից մի քանիսները ռուսերէն և ֆրանսերէն են գրված, միւսները միայն ֆրանսերէն՝ «Սուրամի ոստնէլը», «Նաբանցքը», «Կովկասեան պղնձի հանքերը», «Խաղողի հիւանդութիւնը Կովկասում», «Արդիւնաբերական արուեստները Կովկասում» և «Թիֆլիսի ձիաքաշ երկաթուղին։» Հանդիսի տարեկան գինն է 5 բուբլի, Թիֆլիսում 4 բուբլի։

—

Այս օրերս ասիթ ունեցանք ներկայ գտնվել ԹԻՖԼԻՍԻ թատրոնում Վ. Ադամեանի հոչակաւոր «Ցանկէյզեր» օպերայի ներկայացմանը։ Օպերայի երևելի ասվէլտարան բաւական թոյլ և անդոյն անցաւ։ Երբ օրկէստրը լաւ է ածում այդ ասվէլտարան, նա մեծ տպաւորութիւն է գործում լսողի վրա, այն ինչ մեր օրկէստրը այնպէս է ածում նրան, որ նա ամենևին ոչինչ տպաւորութիւն չէ գործում։ Երգիչներից լաւ էին պ.պ. Մէդվէդև, Բուխովէցկի և տիկին Զարուդնայա։ Երկրորդ գործողութիւնը մանաւանդ շատ ներդաշնակ կերպով անցաւ և այդտեղ տիկին Զարուդնայա համ լաւ երգեց, համ էլ ցոյց տուեց որ իր դէմքի միմիկայով կարող է արտայայտել խորը սիրոյ արտայայտութեան զգացմունքները։ Օր. Եօզեֆովիչ անկասկած սիրուն և հրապուրիչ վէնէրա է իր արտաքինով, բայց մեզ թվում է, որ հարկաւոր է աւելի զօրեղ ձայն ունենալ Վ. Ադամեանի օպերայում երգելու համար։ Շատ անգամ մեր հասարակութիւնը ծափահարում է ոչ թէ լաւ կատարման, այլ դեղեցիկ եղանակի համար։ Մենք յիշում ենք թէ ինչպէս հրաշալի կերպով էր կատարում իր կոնցերտներում տիկին Արտօի հետ մի քանի տարի առաջ Թիֆլիս եկած պ. Պադիլլա «Ցանկէյզերի» երրորդ գործողութեան «Երեկոյեան աստղ» հրաշալի բոմանսը։ Այժմ նոյն բոմանսը երրորդ գործողութեան մէջ կատարեց պ. Բուխովէցկի, բայց նմանութիւն չը կար, ի հարկէ, Պադիլլայի երգածի հետ։ Այնու ամենայնիւ հասարակութիւնը կրկնել տուեց Բուխովէցկուն այդ բոմանսը։ Խօրերը վատ չէին. լաւ էր, մանաւանդ ուսուցչուհիների խօրը։

—

Մենք լսում ենք որ Գաբրիել Սունդուկեանց գրում է այժմ մի նոր պիէսա հայոց ժամանակակից կեանքից։

—

Շնորհակալութեամբ ստացանք Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնից հրատարակված գիւղատնտես Վ. Գէորգիևու նոր բրոշիւրը ռուսերէն լեզուով «Краткій очеркъ земледѣлія за Кавказомъ» վերնագրով։ Գրքոյկը, որ տպված է Թիֆլիսում Ա. Միխելսոնի տպարանում, ներկայ 1887 թվին, պարունակում է իր մէջ մեր երկրի գիւղատնտեսութեան վիճակի կարճ տեսութիւնը։ Գրքոյկին կցված է 1883, 1884 և 1885 թուերին Անդրկովկասում եղած հացի հունձի վիճակագրական աղիւսակը։

—

Հոկտեմբերի 10-ին, Թիֆլիսի քաղաքային թատրոնում կայացաւ պ.պ. Դաւիդովի և Սաֆոնովի կոնցերտը։ Թատրոնը կատարելապէս լի էր, ամենը չտագեցին վերջնել տոմսակներ հռչակաւոր երաժիշտներին լսելու համար։ Քիչ է պատահում Թիֆլիսցիներին լսել այնպիսի ածողին, ինչպէս յայտնի Դաւիդովն։ Վիրտուոզներից ածված երաժշտական գործիքը, առհասարակ, վերին աստիճանի դուրեկան ձայն ունի, բայց Դաւիդովի ձեռքում այդ գործիքը կարծես երգում էր, հրաշալի, զերբնական ձայներ էր արձակում, և իր այդ ձայներով զիտում էր ունկնդիրներին։ Պիանիստ Սաֆոնով կարող է առաջնակարգ ածողներից համարվել. նա միացնում է իր ածելու մէջ տաղանդի թեթևութիւնը ձեռքի ոյժի և տէխնիկայի զարգացման հետ։ Դաւիդովի կատարած պիէսաներից ամենից շատ հաւանեց հասարակութիւնը և բուռն ծափահարութիւններով վարձատրեց՝ իրան Դաւիդովի «Am Springbrunnen» հեղինակութիւնը։ Սաֆոնովի ածած պիէսաներից ամենից շատ ծափահարութիւններ ստացան Ղլինկայի «Жаворонокъ» և Լիշտեանցկու «Մաղուրկան»։ Հին կլասիկան գրուածներն էլ պ. Սաֆոնով շատ լաւ է ածում և առանձին կերպով չեշտում է այս կամ այն երաժշտական նախադասութեան իւրաքանչիւր արտայայտութիւն. նրան, օրինակ, շատ լաւ աջողվում են Մօցարտի, Բախի, Սկարլատտիի և Բէթովէնի գրուածները, բայց Շոպէնի գրուածների կատարելը, մեր կարծիքով, այնքան չէ աջողվում պ. Սաֆոնովին։ Դաւիդովին տրվեցան մի քանի պատիներ Թիֆլիսի երաժշտական դպրոցի կողմից և օպերայի երգիչներից, իսկ Սաֆոնովին մի պակ մատուցին պ.պ. Կորդանով և Խոլիսով-Խմանով։ Առհասարակ հոկտեմբերի 10-ի կոնցերտը մի կատարեալ երաժշտական տօն էր Թիֆլիսի հասարակութեան հանկցող մասի համար։

—

Շաբաթ, ամսոյս 10-ին, բացվեցաւ Թիֆլիսում պ. Ֆիւրերի ցիրկը, որ առաջ գտնվում էր Վլադիկովկասում։ Շաբաթ և կիրակի տուած ներկայացումներից յետոյ, կարելի է ասել, որ խումբը կազմված է բաւարար կերպով։ Կան լաւ, մինչև անդամ աչքի ընկնող վոլտիժօրներ (ձիու վրա պար եկողներ), մարմնամարզներ և կլօուններ։ Երկու անդամն էլ ցիրկը բոլորովին լի էր և հասարակութիւնը բաւական մնաց ներկայացրած կատներից, բացի վերջում տրվող պանտոմիմայից, որ բաւական ձանձրալի էր։

—

քակիրթ երկրներում։ Ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ արդէն պարզվեցան զինուորական առողջապահութեան լաւ հետևանքները։ Ինգելի ատատիստիկան թուերի հիման վրա, գերմանացիները պատերազմում կորցրին 40,881 մարդ, որոնցից 28,282 հոգի թշնամու գնդակներից մեռան, իսկ 12,282 հոգի հիւանդութիւններից մեռան։ Ղրիմի պատերազմի ժամանակ հիւանդութիւններից առաջ եկած մահացութեան յարաբերութիւնը դէպի գնդակներից առաջ եկած մահացութիւնը կազմում էր 100:375, իսկ ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ 100:43, այսինքն յարաբերութիւնը ութ անգամ աւելի բարեյաջող էր։ Սակայն հարկաւոր եմ համարում յիշեցնել, որ Ղրիմի պատերազմի ժամանակ զօրքում խօլերա էր տարածված, որը ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ չը կար։ Թէպէտև մօտ 150,000 հոգի տիֆով և տարբեր հիւանդութիւններով ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ և պատերազմից յետոյ Գերմանիա բերվեցան, սակայն այնտեղ, շնորհիւ առողջապահական միջոցների, ոչ մի տարափոխիկ հիւանդութիւն չը տարածվեցաւ։

«Առողջութիւնը նշանաւոր դեր է խաղում և խաղաղութեան ժամանակ։ Հիւանդը աշխատել չէ կարող։ Հիւանդութիւնը զրամական վնաս է պատճառում, որի չափերը կախված են, ի հարկէ, հիւանդութեան ընդարձակութիւնից և հիւանդի զրամականից։ Եթէ օրէնք լինէր սահմանված, որի զօրութեամբ համայնքները պատասխանատու լինէին առողջապահութիւնը անտես անելուց առաջ եկած հիւանդութեան դէպքերի համար, կարելի կը լինէր զրամական տուգանքներից ազատվել մեծ մասամբ։ Անգլիական երևելի հիգիենիստ Սիմոն առաջարկեց մէկ օրէնք մտցնել, որի զօրութեամբ համայնքները պատասխանատու լինէին վատ ջրաշէջութեան, կանալիզացիայի բացակայութեան համար և այլն, նման այն բաներ, որոնց երկրագործների վարչութիւնները պատասխանատու են այն զէպքերի համար, որ պատահում են գնացքների ընդհարումից և այլն։

Դժբաղդաբար, զումարի և վարչութիւնը շատ լաւ չեն վերաբերվում դէպի առողջապահութիւնը։ Ես բաւարարի եմ, և այդ պատճառով մի ամենաչքի ընկնող օրինակ կը բերեմ իմ հայրենիքից։ Միւնիխնում մի տարվայ մէջ 25 միլիոն մարկ զումարի զարեջուր է խմվել։ Զարեջրի հարկը մեզ համար ամենից հեշտն է և մինչև անդամ ախորժելի է։ Սակայն վատ չէր լինի պակասեցնել զարեջրախումը գոնէ հինգ միլիոնով, որով շատ հեշտ կը լինէր բարձրել առողջապահական պայմանները, մանաւանդ որ զարեջրի գործածութիւնը վնասում է առողջութեանը։ Միւնիխնի բնակիչները ամեն անդամ աղաղակ են բարձրացնում, երբ կամենում են հարկ դնել յօդուտ ջրանցքի, և այլն։ Թող նրանք հինգ բաժակ զարեջրի տեղ օրական չորս բաժակ զարեջուր խմեն, և քաղաքը հինգ միլիոն կը ստանայ, իսկ տասը տարուց յետոյ—յիսուն։

«Վիէննան, անկասկած, իր արտաքին տեսքով գեղեցիկ տպաւորութիւն է գործում, սակայն մենք միակողմանի չը պէտք է լինենք։ Փառաբանելով Վիէննայի գեղեցկութիւնը, չը պէտք է մոռանանք կեղտոտ յետ ընկած տեղերը և անմաքրութիւնները, որ տեսնում ենք այնտեղ, ինչպէս և ամեն տեղ, բաւական քանակութեամբ։ Երևակայենք, որ այս գեղեցիկ Վիէննայից մի գեղեցիկ օր անհետանային բոլոր գեղեցիկ շէնութիւնները և ամբողջ քաղաքի մէջ միայն «հողը» մնար։ Արդեօք մի մարդ կը ցանկար այդ հողի վրա տուն շինել։ Այս ասում եմ Վիէննայի մասին, ուր առողջապահութիւնը ծաղկում է։ Ուրիշ քաղաքներում աւելի վատ է։

Պրոֆէսոր Պէտենկոֆէր խօսեց նոյնպէս կարանտինային սիստեմի մասին, որը շատ կառավարութիւններ մինչև այժմ ամենահաստատ պատնէշ են համարում խօլերայի դէմ։ Անգլիան հակառակ է այդ սիստեմային, և, սակայն, նա վերջին տարիներում կարծես ազատված է այդ հիւրից։ Գործնական անգլիացիները տալիս են իրանց այն փողերի մի մասը, որ կորցնում են վարակված տեղերի հետ առևտրական և այլ յարաբերութիւնների դադարման պատճառով, իրանց երկրի առողջապահական պայմանների բարելաւման համար և աւելի լաւ հետևանքներին են հասնում, քան այն ժողովուրդները, որոնք աշխատում են չինական պատ քաշելով դերս չը թողնել խօլերան։

Լսում ենք որ թատրոնասէրների մի խումբ ԹԻՖԼԻՍՈՒՄ դիտաւորութիւն ունի շուտով մի հայերէն ներկայացում տալ յօգուտ «Կանանց Բարեգործական ընկերութեան»։ Լսում ենք որ կը ներկայացնեն պ. Ալէքսանդր Բիշմիշեանի մի նոր թատրոնական պիէսա։

—

Մի երիտասարդ, որ մի քանի տարի շարունակ ուսել է արուեստասիրութիւնում, վարժ ծանօթ է հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներին, խնդրում է մեզ յայտնել, որ ցանկանում է դասեր տալ ֆրանսերէնից և պատրաստել աշակերտներին չափաւոր վարձատրութեամբ ուսումնարանների տղոցին դասատուների համար։ Հասցէն կարելի է խնդրել «Մշակի» խմբագրատանը։

—

Մեզ գրում են հետեւեալը։ «Բօրչալու գաւառում արդէն սկսել է բրինձի հունձը։ Բրինձը ցանում են դաւառումս միայն այն թուրքական գիւղերը, որոնք գտնւում են Թբաս և Բօրչալու գետերի աջ ու ձախ եղերքներին։ Այս գաւառի բրինձը ընտիր տեսակից չէ, որովհետեւ մշակելու եղանակը չը գիտէ թուրքը գիւղացին։ Հայերն էլ կը պարապէին բրինձացանութեամբ, եթէ հողի և ջրի պակասութիւնը չը զգային։ Ամենաարակ Բօրչալուի հայաբնակ գիւղերը դիւաւորապէս գտնւում են կամ անտառներին կից, կամ նոյն իսկ անտառների մէջտեղ»։

—

ՇՈՒԱՎԷՐԻՑ մեզ գրում են։ «Ձեզ յայտնի է արդէն, որ չուալէրցիք կամենում էին հրէաներին հեռացնել գիւղից, աչքի առաջ ունենալով այն վնասը, որ նրանք իրանց հարստահարիչ ընաւորութեամբ տալիս են միամիտ գիւղացիներին, բայց գիւղացիների ջանքերը մինչև այժմ ապարդիւն էին մնում։ Այժմ վերջապէս հրաման եկաւ կառավարութիւնից հեռացնել հրէաներին Շուալվեր գիւղից»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են։ «Պետերբուրգի Անատոլային ճեմարանում մինչև այժմ ուսանում էին հայ ուսանողներից 5 հոգի, իսկ այս տարի միանգամից այստեղ աւելացել են նոր մտած 11 հայ ուսանողներ, ուրեմն այժմ ընդամենը Անատոլային ճեմարանում հայ ուսանողների թիւը 16 հոգի է»։

—

ԲԱԳՈՒԻ մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ սեպտեմբերի 26-ին, Բագուից, 20-ի չափ ատրաբդրութիւններով մի չնորհաւորական հեռագիր ուղարկուեցաւ հուչակաւոր հայ նկարիչ Յովհաննէս Այվազովսկուն, նրա գեղարուեստական արդիւնաւոր գործունէութեան յիսնամեակի առիթով։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետեւեալը։ «Պ. Կարա-Մուրզա արդէն հասաւ Բագու և նրա պարապմունքները կը սկսուին հոկտեմբերի 11-ից։ Պարոնը իր ճանապարհորդութեան մէջ այցելել է Դրբիմ, Կ. Պոլիս, Վիեննա, Վենեցիա և այլն, և ծաղուել է բաւական հարուստ երաժշտական նիւթեր ամեն տեղից։ Պ. Կարա-Մուրզա խոստանում է նկարագրել իր ճանապարհորդութիւնը և տպագրել լրագրում։ Ըստ երեւոյթին այդ ճանապարհորդութիւնը շատ հետաքրքիր պէտք է լինի»։

—

ՇՈՒԱՎԷՐԻ մեր թղթակիցը մեզ գրում է։ «Տեղիս հայոց դպրոցների հոգաբարձութիւնը ընդարձակեց օրիորդաց ուսումնարանը, բաժանելով նրան երկու բաժանմունքի։ Բայց դժբախտում ենք թէ ինչ է պատճառը որ ձեռագործի դասերը շատ անտէր թուով են նշանակուած, այն ինչ գիւղում ամենից շատ արհեստի կարիք է զգացւում»։

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ շուտով գալու է ԹԻՖԼԻՍ մի քանի կոնցէրտներ տալու համար, երեւելի Տէրշակ, որ Փիլիպի վրա է ածում, և որի նման ֆլէյտիստ ամբողջ Եւրոպայում չը կայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Paris» լրագրի ասելով, մոտաւորութիւն կայ Ֆրանսիական պատերազմական մինիստրութեան մէջ վերանորոգութիւններ մտցնել։ Կը լինի պատերազմական մինիստր, որ, ինչպէս և առաջ, պատասխանատու կը լինի պարլամենտի առաջ, մի և նոյն ժամանակ ենթադրւում է բոլոր պատերազմական ոյժերի վրա նշանակել մի ղեկաւոր հրամանատար, որը կարող է պաշտօնապուրկ լինել, միայն հանրապետութեան նախագահի հրամանով։ Պատերազմական մինիստրը իրաւունք կունենայ յարաբերութիւններ ունենալ օրէնսդրական իշխանութեան հետ, որոշել բիւդժետը և հսկել բիւդժետի օրինաւոր գործադրութեան վրա. մինիստրի բոլոր միւս պարտաւորութիւնները կը տրուին դիւաւոր հրամանատարին, որ չը պատկանելով կարինէտին, հասկանալի է, որ չի էլ ենթարկուի յաճախ կրկնուող մինիստրական փոփոխութիւնների հետեւանքներին։ «Paris» հաւատացնում է, որ նոր պատերազմական մինիստր կը նշանակուի Ժան-Կազիմիր-Պերիէ, իսկ դիւաւոր հրամանատար—Ֆարիդի այժմեան դիւանական նահանգապետ գէներալ Սոսիէ։

—«Journal des Dédats»-ի Ցանժերից ստացած տեղեկութիւններին նայելով, Մարոկոյի սուլթանի առողջութիւնը լաւանում է և նա արդէն կարողացել է ձիու վրա երեալ ժողովրդին։

—Սոֆիայից, հոկտեմբերի 2-ից, հեռագրում են «Новости» լրագրին, որ Ստամբուլով վիճակաւոր իշխում է ազգային ժողովում և նա մտադրութիւն ունի պահանջելու, որ ժողովը հրաւարակի Բուլգարիայի վիճակաւոր անկախութիւն, ներքին հարցերը վճռելու վերաբերմամբ։ Ներքին հարցերին վերաբերում է նա և իշխանի ընտրութիւնը։

—Բելգրադից հեռագրում են նոյն լրագրին, որ Բիսմարկ պաշտօնապէս բողոքել է Թիւրքայ կառավարութեան, արնաւանների աւաղակային խմբերի սերբական սահմանների վրա յարձակուելու առիթով։

—Կ. Պոլսից գրում են «Times» լրագրին։ Ռուսաց դեսպանատան խորհրդատու պ. Օնու յանձնելով Բ. Դրան իր կառավարութեան պատասխանը, յայտնեց, որ Ռուսաստանը ցանկութիւն ունի ուղարկել Բուլգարիա իր վիսգօրին, տալով նրան իշխան—տեղական ոյժերը։ Իսկ ինչ վերաբերում է Թիւրքական կոմիսարին, որ պէտք է ուղեկցի առաջինին, նա պէտք է միայն խորհրդակից լինի։ Այն հարցը, թէ արդեօք Արեւելեան Բումելիայի պատգամաւորները իրաւունք ունեն մասնակցել ազգային ժողովի նիստերին, պէտք է վճռեն ոչ թէ բոլոր պետութիւնները, այլ միայն Ռուսաստանը և Թիւրքիան։ Ռուսաստանը նոյնպէս ցանկանում է, որ երկու կոմիսարների հայեցողութեան ենթակայ լինեն՝ իշխան—տեղական լիազօրութեան ժամանակը, բուլգարական կաբինէտի կազմելը և Բուլգարիայի համար թեկնածուներ ներկայացնելը իշխան ընտրելու համար։ Նամակագիրը տեղեկացնում է, որ պ. Օնուի առաջարկութիւնները Թիւրքայ մինիստրական խորհուրդը ներկայացրեց սուլթանին, իր կողմից առաջարկելով ռուսաց յայտագիրը ուղարկել Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին։

—Բուլանժէին, որին մտադրութիւն կայ արձակել զինուորական ծառայութիւնից, արմատական կուսակցութիւնը մտադրութիւն ունի ազգային ժողովի անդամ ընտրել։

—Վիլսոն պահանջեց, որ Կոֆարէլի գործին մասնակից Պէյսմօրին և տ. տ. Բատացիին ու Լէմուշէնին հարցաքննեն։ Այդ երեք անձն էլ Վիլսոնի ներկայութեամբ յայտնեցին քննիչին, որ նրանք աշխատել են Վիլսոնին էլ գործի մէջ խառնել, որպէս զի կարելի լիներ գործը լուծեան տալ։

—Զինական կառավարութիւնը գիտել է գերմանական կառավարութեան, խնդրելով թոյլատրուիւն գերմանական որոշ թիւ սպաներին մտնել զինուորական ծառայութեան մէջ, չինական զօրքը ուսուցանելու համար։ Այդ սպաները հրաւիրւում են Չինաստան երեք տարով և այդ ժամանակամիջոցին նրանցից ամեն մէկը ամսական կը ստանայ 900 մարկ ռոճիկ։ Չինական լեզուի դիտենալը պարտադիր չէ, քանի որ նրանք պէտք է սովորցնեն չինացիներին թարգմանների միջոցով։ Մօտ հարիւր գերմանական սպաներ յայտնութիւն են յայտնել չինական կառավարութեան առաջարկած պայմաններով գնալ Չինաստան։ Նրանցից ով որ կընտրուի ուսուցիչ, կուղեւորուի իր պաշտօնատեղին այս հոկտեմբերի վերջերին։

—Պատերազմի պատարաստելու հարցը սպառնում է մինիստրական ճգնաժամ յարուցանել և փարիզի Հօրանդիայում։ Հաղորդից հեռագրում են «Новости» լրագրին, որ մինիստրութիւնը վճռել է հրաժարուել, եթէ պարլամենտը չընդունի մինիստրութեան առաջարկութիւնը զերմանական սահմանների վրա նոր բերդեր կառուցանելու մասին։

—«Հիւսիսային դործակալութիւնը» հեռագրում է մեզ Լոնդոնից, հոկտեմբերի 9-ից, որ անզործ մնացած բանւորների պատգամաւորութիւնը ընդունուեցաւ ներքին գործերի մինիստրութեան մէջ և լորդ-մէրը դումարեց մի մասնաժողով բանւորների ազէտալի դրութեան առաջն առնելու համար գործ դրուելի միջոցների մասին խորհելու նպատակով։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 5-ին վախճանուեցաւ Բերլինում աշխարհահռչակ գերմանացի ֆիզիկոս Գուստաւ Ռոբերտ Կիրխհոֆ, որ ծնուել է 1824 թուին Կեոնիգսբերգում, Պրուսիայում։ Նա պրոֆէսոր էր Բրէսլաւում, այնուհետեւ Հէյդելբերգի և վերջապէս Բերլինի համալսարանում։ Կիրխհոֆ հռչակուեցաւ իր հետազօտութիւններով էլէկտրականութեան և գալվանիզմի մասին, բայց մանաւանդ ահագին հռչակ ստացաւ արեգակի ճառագայթների լուծման հետազօտութեամբ, որ կատարեց քիմիկոս Բունզենի օգնութեամբ։ Կիրխհոֆի արած արեգակի ճառագայթների անալիզը (спектральный анализъ) մինչև ասելց համոզիչու, որ արեգակի վրա գտնւում են նոյն միներալներ, որոնք և գտնւում են երկրագնդի վրա։ Կիրխհոֆ դեռ շատ ծեր չէր և կարող էր դեռ ևս ծառայել համաշխարհային գիտութեան, մահը խլեց նրան 63 տարեկան հասակում գիտական աշխատիցից։

* * *

Վերջապէս այժմ յայտնի է որ արդի քաղաքագէտներից որն է ամենամանրակրկիտը։ «Pruth» լրագրի ասելով ամենից շատ կշիռ ունեցողը մարկիզ Սալիսբրին է, որի քաշը այս օրերս հասնում էր 115 կիլոգրամի։ Իշխան Բիսմարկը քաշում է միայն 95 կիլոգրամ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 հոկտեմբերի։ «Journal de St. Petersbourg» լրագիրը ասում է որ բուլգարական ազգային ժողովի վճիռները մագի չափ չեն առաջացնի բուլգարական հարցի լուծումը։ Այդ տեսակ ազգային ներկայացուցիչներ, որը իր դրութեամբ պարտական է նենգութեանը և բռնութեանը, և պահպանւում է դանակոծութիւնների և հրացանաձգութիւնների օգնութեամբ՝ ոչինչ հաստատուն բան ստեղծել չէ կարող։ Լրագիրը աւելացնում է որ օտարերկրեայ մամուլի տեղեկութիւնները բուլգարական հարցի մասին եղած բանակցութիւնների վերաբերմամբ՝ ճիշդ չեն։ «Новости» հաղորդում է որ վճռված է լրացուցիչ տուրքին ենթարկել զինի և սպիրտ՝ առաջին և երկրորդ կարգի քաղաքներում։ Լրագիրը հաստատում է, որ այդ հարկը շատով կը հաստատուի, որպէս զի ոստիկանական վարչութեանը միջոց տրուի իրագործել բոլոր նախապատրաստական աշխատութիւնները։

ՄՈՍԿՎԱ, 10 հոկտեմբերի։ Այսօր դատաստանական պալատում սկսուեցաւ Լէրեղիանովի քաղաքային հասարակական բանկի մէջ կատարուած գեղծումների գործի քննութիւնը։ Դատաստանին ենթարկուած են 10 անձինք, որոնցից մինը մեռաւ։ Դատւում են 9 հոգի՝ բանկի նախկին կառավարիչները, որոնք բանկին պարտք են մնացել 277,000 ռուբլի Խգումնով ու Զուրիլին որոնցի յայտնաձները, և կառավարիչների օգնականները՝ Ա. Փոլոլ, Ն. Պոլոլ, Ալֆերով և Ուլանով, նմանապէս նախկին քաղաքագլուխներ Դորչիով և Սարէչնիկով, վերջապէս և բանկի հաշուապահ Բինդին։ Մեղադրւում է պրոկուրորի օգնական Գրամնիցկի, պաշտպանում են երդուեալ հաստատարմատարներ՝ Պլէվակո, Պրժէվալսկի, Մուրատով և Ուլման։ Ներկայ են 15 վկաներ։

ԲՕՄԲԷՅ, 10 հոկտեմբերի։ Լուսերին համեմատ Նիզամ-խանին աջողուել է անցնել ուզանեան սահմանով դէպի Բէլուջիստան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի։ Վրաստանի էկզարխոս Պավլին հրամայուած է լինել Կազանի արքեպիսկոպոս, իսկ Կազանի արքեպիսկոպոս Պալլադին,—Վրաստանի էկզարխոս։

ԴՕՐՊԱՏ, 11 հոկտեմբերի։ Օրլէանիստների ժողովի առիթով Դօրպատում, Փարիզեան կոմսի քարտուղարն ասաց տեղական լրագրին, որ կոմսը և նրա համախոհները ամենեին դաւադիրներ չեն, և որ նրանք ձգտում են միայն դէպի կառավարական այն ձեւի վերադարձնելը Ֆրանսիայում, որը միակ յարմար ձեւն է այդ երկրի համար, այն է ռամկապետական միապետութիւն, որ հաստատել են Օրլէանները, որոնց կառավարութեան տակ Ֆրանսիան երջանիկ էր։

ՎԻԵՆՆԱ, 11 հոկտեմբերի։ Պատերազմական մինիստրութիւնը վճռեց մտցնել աւստրիական զօրքի մէջ փոքր չափի հրացաններ։ Կառավարական ճգնաժամը, որ առաջ է եկել չէխերի պահանջների պատճառով, դեռ ևս լուծված չէ։ Եթէ չէխերը զիջումներ չանեն, այն ժամանակ կաբինէտը ստիպուած կը լինի, երեւի, հրաժարական տալ, և կը փոխարինուի մի կաբինէտով, որ բաղկացած կը լինի գերմանական և լեհական տարրերից, ուրեմն հակառակեան բնաւորութիւն կունենայ։

ՓԱՐԻԶ, 11 հոկտեմբերի։ Մինիստրութիւնը դիտաւորութիւն ունի պահանջել ազգային ժողովից հաստատմութեան քուէ։ Ակնկալութիւնները, հաւանական է, որ կը պաշտպանեն մինիստրութիւնը և այդ պատճառով մինիստրութիւնը ապահոված կունենայ մեծամասնութեան աջակցութիւնը։ Սակայն Բուվիէ յայտնեց որ կը պահպանի իր ձեռքում կառավարութեան զեկը միայն այն ժամանակ, երբ իր կողմը կունենայ պարլամենտի առնուազն 200 հանրապետական անդամներ։

ԴՕՐՏԼԻԹՑ, 11 հոկտեմբերի։ Օրլէանեան իշխանների և նրանց կուսակիցների ժողովը ունի նշանաւոր նպատակներ։ Եկողների ազգանունները խիստ գաղտնի են պահպանւում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 սեպտեմբերի։ Հրատարակուած է հրամանագիր հողերի գնահատութեան համար նրանց դրաւ դնելու ժամանակ գինու ակցիզի վճարի յետաձգութեամբ։ Ֆինանսների մինիստրութեան շրջաբերականը բացատրում է, որ «Собраніе Узаконеній» ժողովածուի համարի ստանալու օրից, որի մէջ տպված կը լինի դրուագաւոր տուրքի վերաբերեալ կանոնադրութիւնը, մինչև այդ ժամանակամիջոցը, բնակարանային դրքոյկի ձեւով, քաղաքներում տարեկան 500 ռուբլուց բարձր արժողութիւն ունեցող բնակարան վարձելու մասին կտրված բոլոր պայմանագրութիւնները, եթէ տանտէրը և բնակարան վարձողը ցանկանան դրաւոր պայմանագրութիւն ունենալ, պարտաւոր են նոր պայմանագրութիւններ կազմել պատշաճաւոր դրուագաւոր թղթի վրա։ Բնակարանական տեսակները 500 ռուբլի դումարից ոչ բարձր բնակարանների, նոյն ժամանակամիջոցից սկսած ենթարկուում են 80 կոպէկանոց դրուագաւոր դրոշմի տուրքին։ Այդ կանոնները թէ բնակարանների տէրերի և թէ բնակարաններ վարձողների կողմից չը կատարելու համար, երկու կողմն էլ ենթարկուում են տուգանքի, դրուագաւոր տուրքի կանոնադրութեան 107 յօդուածի հիման վրա։ Լրագրիները հաղորդում են, որ յունվարի մէկից ենթադրութիւն կայ աւելացնել մաքսահարկը արտասահմանեան գիւղատնտեսական մեքենաների և այլ գործիքների՝ վրա մինչև 70 կոպէկ։ Նոյնպէս կաւելացուի մաքսահարկը արտասահմանից բերուող բժշկական գեղերի, բոյսերի և մի քանի ծաղիկների տեսակների վրա։

ՓԱՐԻԶ, 12 հոկտեմբերի։ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ կայացաւ համաձայնութիւն Սուէզի ջրանցքի չէզոքացման վերաբերմամբ։

ԲԻԼԳՐԱԴ, 12 հոկտեմբերի։ Սերբիան, դժգոհ լինելով որ արնաւանները անդադար արշաւանքներ են գործում իր հողի վրա, մտադիր է, եթէ Թիւրքիան այդ արշաւանքներին վերջ դնելու համար հարկաւոր միջոցներ չի գործ դնիլ, իր սեփական ոյժերով պաշտպանելու սահմանագլուխ ապրարնակութիւնը, դրա հետեւանքի պատասխանատուութիւնը Բ. Դրան վրա թողնելով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Հոկտեմբերի 9-ին

Ռուսաց 1 ռուբլ.	Լոնդոնի վրա արժէ	$21^{13}/_{32}$	պէնս.		
— —	Համբուրգի վրա	— $181^1/_2$	պֆ.		
— —	Փարիզի վրա	— $226^1/_4$	սան.		
Ոսկի —	արժէ — հինը	—	›	—	կ.
— —	— — նորը	8	›	96	›
Պարապին կուպոնները	— . .	178	›	75	›
Արծաթ — —	— . . .	1	›	30	›
Բօրսային դիսկոնտները	— . .	$5^1/_2$	›	7%	›
Պետական. բանկ. 5% տոմս	1-ին չրջանի	99	›	75	›
— — — —	2-րդ —	98	›	75	›
— — — —	3-րդ —	98	›	62	›
— — — —	4-րդ —	98	›	62	›
— — — —	5-րդ —	98	›	62	›
— — — —	6-րդ —	—	›	—	›
Արևելեան 5% փոխառութ.	1-ին չրջ.	97	›	75	›
— —	2-րդ —	97	›	75	›
— —	3-րդ —	97	›	75	›
Նվրքին 5% առաջին փոխառութ.		273	›	—	›
— երկրորդ —		247	›	75	›
$5^1/_2$% բենատ		102	›	—	›
Ոսկեայ բենատ		193	›	—	›
Եօթերորդ կոնսոլիդատ փոխառութիւն		164	›	—	›
Նոր երկաթուղային բենատ . . .		98	›	62	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		166	›	50	›

Գրաւ. թղ. Աղնս. բանկի . . .	98 ›	— ›
5½% գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.	98 ›	50 ›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	100 ›	75 ›
— — Պոլտավայի— —	101 ›	— ›
— —Պետ.Տուլսկ.— —	101 ›	— ›
— — Կիեւի — —	101 ›	— ›
— — Մոսկվայի — —	101 ›	— ›
— — Բեսարաբ. Տաւր.—	101 ›	— ›
— — Նիժ. Սամար. —	101 ›	— ›
— — Վիլնայի —	101 ›	— ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	99 ›	— ›
— —Քութայիսի-18 և 43 տ.	99 ›	50 ›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	723 ›	50 ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	266 ›	25 ›
Ռիբինսկ-Վոլոգդայի ընկ.	86 ›	— ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլիգացիաներ.	94 ›	75 ›
Մոսկվայի քաղաք. օրլիգացիաներ .	95 ›	50 ›
Օդէսայի — — .	94 ›	12 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. .	83 ›	75 ›
Նոր փոխառութիւն.	83 ›	12 ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒԸ 1886—1887 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՑ ՀԱՄԱՐ

—

Մեր ազգային գործերից մեծ մասը կառավարվում են ժողովրդեան միջից ընտրած անձանց միջոցով։ Մեր ազգային հիմնարկութիւնները իրանց գոյութիւնը պահպանում են ժողովրդի տուած նուիրաբերութիւններով։ Հետևապէս ընտրողների և ընտրեալների մէջ կատարեալ համերաշխութիւն պահպանելու և ընտրողների հաւատն ու յոյսը արդարացնելու համար—ընտրված անձինք պարտաւոր են իրանց բոլոր գործառնութիւնների մասին մանրամասն հաշիւ տալ այն հասարակութեանը, որի ընտրութեամբ և հաւանութեամբ կոչված են եղել նոքա՝ որ և է ընդհանուր գործ ղեկավարելու։ Բացարձակ հրապարակութիւն (гласность) և հաշուետուութեան պատրաստականութիւն—ահա այն միջոցները, որոնք ժողովրդի մէջ վառ են պահում բարեգործութեան եռանդը, որոնք չարամիտ և բամբասասէր մարդկանց լեզուները կարճացնում են և համոզում են ամենքին՝ թէ իւրաքանչիւր տուած ամենափոքր օժանդակութիւնն անգամ ի զուր չէ կորչում, չէ ծառայում այս կամ այն անհատի անձնական շահերին, այլ բարեխղճաբար և ճշդօրէն գործ է դրվում բուն նպատակի համար։—Ահա այդ ճշմարտութեանը կատարելապէս համոզված լինելով՝ հոգաբարձութիւնս իր քաղցր և սրբազան պարտականութիւնն է համարում ներկայացնել հայ հասարակութեանը անցեալ 1886/87 ուսումնական տարվայ ընթացքում ունեցած գործունէութեան համառօտ հաշիւը, որքան որ կը ներեն պարբերական մամուլի սահմանափակ էջերը։

Հոգաբարձութիւնս իր արդեանց և ծախսուց քանակութիւնը խոշոր յօդուածներով մէջ բերելով այստեղ, պատիւ ունի յայտնել Կարսի հայ հասարակութեանը, նմանապէս և այլ օտարտեղացի համազգեաց, որ մեր միամեայ գործունէութեան ամենամանրամասն հաշիւը, ժապավենեալ մատեանում գրված, գտնվում է հոգաբարձութեանս գրասենեակում, որի դռները բաց են մեր հաշիւները տեսնել ցանկացող իւրաքանչիւր անձի համար,—լինի նա հարուստ թէ աղքատ, աստիճանաւոր թէ սոսկական, վաճառական թէ մշակ։ Քանի որ Կարսի հայ հասարակութեան իւրաքանչիւր դասակարգի ներկայացուցիչների ընտրութեամբ ընտանձնել ենք մեր պաշտօնը, ուստի և հասարակութեան բոլոր դասակարգերին էլ պարտաւոր ենք հաշիւ տալ։ Հոգաբարձութիւնս չնորհակալութեամբ ստացել է հարուստի հարիւր ռուբլին և չքաւորի կօպէկները, և հրապարակով վկայում է, որ Կարսի հայ ժողովրդեան իւրաքանչիւր դասակարգ, իր կարողութեան համեմատ, բերել է իր նուէրը ընդհանուր գործի գանձարանը ձգելու համար։ Այստեղ հարկաւոր ենք համարում յայտնել, որ հոգաբարձութիւնս անցեալ ուսումնական տարվայ սկզբին ստանձնելով իր պաշտօնը, ոչինչ դրամական միջոց չունէր ի նկատի, ուստի մի քանի բարենպաստ անձանց օգնութեամբ ստորագրութիւն բաց արեց և ի պատիւ հասարակութեան պէտք է ասենք, որ աջողութեամբ առաջ գնաց գործը։ Ոմանք ստորագրութեամբ խոստացան միամեայ միանուագ նուէր տալ, այլք երեքամեայ ժամանակամիջոցով, որոնց, դրեթէ, կէս մասը դեռ ևս մնում է հաւաքելու։ Ահա առաջ ենք բերում մեր դպրոցների տարեկան մտից և ծախսուց համառօտ հաշիւը։

Մուտք

1) Միանուագ և երեքամեայ անդամական տուրքերից ստացված է	1,781 ր.	60 կ.
2) Պ. Մանուկ Գրիգորեանցի ձեռամբ զանազան անձինքներից անդամական տուրքեր. . .	21 »	40 »
3) Պ. Մանուկ Գրիգորեանցի ձեռամբ ժողոված է Սարիղամիշու հայ հասարակութիւնից . .	40 »	40 »
4) Կարսի հայ հասարակութիւնից ժողոված է «Լուսադին».	106 »	15 »
5) Աստիճանաւոր պ. Յովհաննէս Դ.օրխմազեանցից ստացվել է նրա ժողոված Սարիղամիշում.	67 »	— »
6) Հանդուցեալ տիկին Հռիփսիմէ Պողոսեանցի յիշատակի համար ստացված է նուէր. . .	25 »	— »
7) Պ. Յովհաննէս Ունճեանցի ձեռամբ դիակառքի վարձ է ստացված.	3 »	— »
8) Աշակերտների և աշակերտուհիների թոշակաղրամից գոյացել է	1,445 »	— »
9) Թատրօնական երկու ներկայացումներից արդիւնք ստացված է.	275 »	65 »
10) Քաղաքիս ս. Աստուածածին եկեղեցուց՝ դպրոցներին սահմանեալ 400 ռուբլուց ստացված է.	100 »	— »
11) Քաղաքիս ս. Նշան եկեղեցուց՝ դպրոցներին սահմանեալ դումարն ստացված է.	200 »	— »
12) Մանկական մատենադարանի դասական պիտոյքների վաճառումից գոյացած արդեանց մնացորդն.	35 »	85 »
Ամբողջ տարվայ մուտքի դումարն է չորս հազար մի հարիւր մէկ ռուբլի հինգ կօպէկ	4,101 ր.	5 կ.

—

Ծախք

1) Ութն ուսուցիչների և երկու վարժուհեաց տարեկան վարձ տրուած է	3,224 ր.	— կ.
2) Դպրոցի ծառային տասն ամսվայ վարձ.	89 »	— »
3) Դպրոցների վերանորոգութեան և զանազան կարկատանների ծախս եղած է	203 »	23 »
4) Ուսուցիչներ հրաւիրելու և զանազան թղթակցութ. ծախք.	23 »	86 »
5) Զանազան մանր ծախքեր.	27 »	79 »
6) Դպրոցների համար երկաթ սաժէն վառելափայտ.	78 »	— »
7) Ցիշեալ փայտերը կոտորելու ծախք է եղած	11 »	40 »
8) Չորս գրատախտակների չինութեան համար վճարված է .	16 »	— »
9) Աշակերտաց տետրակների տպագրութեան ծախք է եղած.	41 »	56 »
10) Ջեռագործութեան համար առնված նիւթերին վճարված է.	28 »	81 »
11) Հոգաբարձական քարտուղարին վարձ է տուած	50 »	— »

Տարեկան ծախք եղած է երեք հազար եօթ հարիւր ինսուն և երեք ռուբլի վաթսուն և հինգ կօպէկ . . . . 3,793 ր. 65 կ.

Վերոյիշեալ հաշուից երևում է, որ տարեկան ծախքը մուտքից ռուբս դալով, հոգաբարձութեանս մօտ մնում է առձեռն դրամ երեք հարիւր եօթը ռուբլի քառասուն կօպէկ։

Բացի այդ դումարն՝ հոգաբարձութիւնս ունի ստանալու անցեալ տարվանից երեք հարիւր ռուբլի ս. Աստուածածին եկեղեցուց և նոյն եկեղեցուց՝ դպրոցապատկան կրպակների վարձ 350 ռուբլի։

Անցեալ տարվայ անդամական վճարներից մնացեալ ապառիկից ստանալիքն և աշակերտական թոշակաղրամներից ապառիկ մօտ 200 ռուբլին՝ երբ կը ստացուին՝ կը մտնին ներկայ ուսումնական տարվայ մեր հաշուեցուցակի մէջ։

Վերջացնելով ներկայ հաշիւը, հոգաբարձութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն բոլոր բարեսէր անձանց, որոնք ամեն կերպ օժանդակեցին դպրոցական գործի նիւթական կողմը լաւացնելուն։ Եւ հէնց Կարսի հայ ժողովրդի նուիրաբերեալ առատաձեռնութիւնն էր, որ ստիպեց հոգաբարձութեանս անցեալ տարվանից, զրեթէ 1,000 ռուբլի աւելի ծախսելու նախահաշուով, բանալ այս տարի աղջոց II դասարանի II բաժանմունք, օրիորդաց I դասարանի III բաժանմունք և բացի դորանից տղայոց I դասարանի II բաժնին զուգընթաց բաժանմունք։ Ուսումնարանում ներկայումս սովորում են 290 տղաներ և 120 աղջկերք—գումարն է 410 աշակերտներ։ Ուսուցիչներն են լինն անձինք և երկու էլ վարժուհիներ,—ընդամենը 11։

Հոգաբարձու. Աւետիս Սաֆարեանց, Սերգէյ Մուրուզեանց, Դաւիթ Միրիմանեանց, Մովսէս-բեգ Տէր-Սարգսեանց.

Քարտուղար. Խաչատուր Մառանկոզեանց.

ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(Вѣнскій магазинъ)

Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Մղիվանիի տանը, առաջին կլասիկական զիմնազիայի դիմաց։

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանն, որ ՄՕՏ ՕՐԵՐՍ ստացել եմ գանազան յայտնի և նշանաւոր գործարաններից ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տղամարդկանց և երեխայոց աշնանային և ձմերային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի։ Ամենի համար գները մատչելի և ձեռնտու են։

Վ. Խուդավերդեանց

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Զափաւոր վարձատրութեամբ յանձն է առնում պատրաստել երեխաներին միջնակարգ ուսումնարանների ստորին դասատների համար։ Հասցէի համար դիմել „Մշակի“ խմբագրութեանը։ 13—15

ԵՐԳՈՒՆԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՍԷՐԳԷՅ ՎԱՍԻԼԻԵՎԻՉ ԶԷՄԷՍՕՎ

անցաւ Արսէնալնայա փողոցը, տուն Գօրբունովի, № 66, նախկին ձմեռնային Կրուժօկի եան։ 5—6

Այս տեսաւ բժշկապետ Գրիգոր Գասպարեան Տէր-Գրիգորեանցի Ղզլարեցւոյ

„ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹԻՒՆ“

Ծախվում է կենտրօնական դրավաճառանոցում և հեղինակի բնակարանում։ Ստարօ-Ինստիտուտսկայա, համար 19.
Գինն է 50 կօպէկ։

4—6

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար։ Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի ¼ արժէ 60 կ.։

Հեղուկ բաղլինջների դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 ռուբլի։

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Դօրակի գինը 1 ր. 20 կ. գուտապէրչի մեքենան առանձին. ½ դօրակ 65 կ.

Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց։ Դօրակի գինը 1 ռուբլի։

Կուղբի ճարպի օծուն, պահում է խանութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը։ Գինը 75 կօպ.

Մաղերի ներկ, սև, շագանակագոյն և շէկ։ Մի անգամ ներկված մաղերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ։ Ներկված մաղերը չէ կարելի զանազանել բնական մաղերից։ Արկղիկը 3 ռուբլի.

Բիս. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Դրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 62—100

Մի հայ տիկին ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ. դիմել „Մշակի“ խմբագրութեանը։ 3—3

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԽԵԱՆՑԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բօժօժ, մետաքսի և բօժօժի մնացորդք, բուրդ, բամբակ, յորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում։ Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար։ Ամբողջ ապրանքները ստանալուց ուժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie МИЛАНЪ (Италія).

Дозволено цензурою, Тифлисъ 12 октября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.